Հ. Տ. ԱՐԻ 1761 ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 16 ՏՐԷ 4382 — Հ. Տ. 24 ՆՈՅԵՄԲԵՐ 1889 — Ն. Տ. 6 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1889 — ՀԻՋՐ. 12 ՐԷՊԻԼ, ԱԽԸՐ 1307 ՈՒՐԲԱԹ

20 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ԿԱՐՈՂ ԵՆ ԻՐԵՆ ԴՐՈՒՅԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂԳԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՎԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Գալաթիա, Նորատունկեան-խան

درعليه‌ده غلطه‌ده نورادونكيان خانده آروملك
غزته‌سى اداره‌سنه

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՎԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ.

ԱՌԱՔԱԼՈՒՄԻ ԳԻՆՈՒՑԻՆ

Մի Պարոյ համար [illegible]	160
[illegible]	80
[illegible]	40
Տարեկան	200
Վեցամսեայ	110
Օտար երկիրներ տարեկան [illegible]	56
[illegible]	28

Դիմում գրելու [illegible] Տնօրէնութեան վրայ և ամբողջութեան [illegible] կամ գրութիւն ես լսուիր։

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, 24 ՆՈՅԵՄԲԵՐ, 1889

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՕՐՈՒԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ

ԴԻՊԵՐԸՆ Ի ՌՈՒՍԻԱ.

Պալթիկեան գաւառաց ռուսացումը ռուս կառավարութեան գլխաւոր զբաղմանց մին է այժմ, ներքին գործոց մասին։ Ռուսիոյ պալթիկեան գաւառաց բնիկները գերման ցեղէն են, և չնորհիւ իրենց բարւոք կրթութեան, գերման գրականութեան և Գերմանիոյ մօտաւորութեան, հաստատ կը պահեն իրենց ազգութիւն իւր ամէն յատկանիշերով։ Ռուս հայրենասէրք տհաճութեամբ կը տեսնեն զօրաւոր գերման տարր մը Կարբուքեան սահմանաց մէկ փափուկ կէտին վրայ։ Գերմանիոյ հետ պատերազմի մէջ Ռուսիոյ այս գերմանազգի հպատակք Գերմանի՞ոյ թէ Ռուսիոյ կողմը պիտի բռնեն։ Գերմանական տարրութիւնք, հին ժամանակէ մնացեալ գերմանական վարչական դրութիւնք և գերման ազնուականութեան կամ երեւելեաց ազդեցութիւնը առաւելակշիռ են այս գաւառաց մէջ, և ի դերեւ կը հանեն ռուսական պաշտօնական և ընկերային ազդեցութիւններն։ Հետեւապէս, ռուս կառավարութիւնն իրեն կէտ նպատակի դրած է մի առ մի բառնալ պալթիկեան գաւառաց գերմանական դրութիւններն և ազդեցութիւնները։ Լուտերական կղերին քով, զօրաւոր օրթոտոքս կղեր մը հաստատած է՝ նոր և ճոխ եկեղեցիներով օժտելով, և կրօնափոխական ձեռնարկութեանց համար լիակատար ազատութեամբ զօրացուցած։ Ռուսերէնն և այլ ամէն ռուսական ուսումները պարտաւորիչ ըրած է Գերմանաց վարժարաններուն մէջ։ Բարձրագոյն վարժարանները բոլորովին իւր ձեռքն անցուցած է։ Կրթական, գրական և ասիականական վարչութեանց մէջ ռուսական օրէնքներն և դրութիւններն հաստատած է, կամ կը հաստատէ տակաւ առ տակաւ, և հիմակ ալ կ'ի՛մանանք Փեթերսպուրկէ թէ գերման ազնուականութեան գաւառական ժողովները կը լուծուին, և հաստակ ժողովներ կը հաստատուին, որոց մէջնցաւ ռուս կառավարութիւնն աւելի ուղղակէս կարենայ գործել։

* *

Ռուսիոյ գերմանատեացք, որք լեգէոն են, մեծապէս հրմատեցան ի լուր խիստ տնօրինութեան որ եղաւ Ռիգայի գերմանազգի քաղաքային խորհրդոյն դէմ։ Ինչպէս կը յիշեն մեր ընթերցողք, Լիվոնիոյ կառավարիչը ներքին գործոց նախարարին խնդրուցած էր քաղաքական ինչ ինչ անպատշաճ ակնարկութիւններ զրոյ Ռիգայի քաղաքային խորհրդոյն դէմ։ Ինչպէս կը յիշեն մեր ընթերցողք, Լիվոնիոյ կառավարիչը ներքին գործոց նախարարին խնդրուցած էր քաղաքական ինչ ինչ անպատշաճ ակնարկութիւններ զրոյ Ռիգայի քաղաքային խորհրդոյն Նստին մէջ չէրքէս Պէյ մը Նասրէտտին Շահին նկատմամբ անվայել խօսքեր ըրած լինելով պաշտօնէն զրկուած է։

* *

Քանի որ Պարսկաստանի վեհապետին անունն յիշեցինք, տեղն է դիտել տալու թէ անգլիական վաճառականութեան և ազդեցութեան աճեցուն յաջողութիւնը մեծաւ հոգածութեամբ կը դիտուի ռուս գործարանատերաց և դիւանագիտաց կողմէ։ Փեթերսպուրկէ առ Թաշկ ուղղեալ թղթակցութենէ մը կ'իմանանք թէ ելմտական նախարարութեան վաճառականութեան և արհեստագործութեան վերաբերեալ պաշտօնարանին մէջ այս խնդրոյ վրայ ժողով մը գումարուելով, որոշուած է խնդրել կառավարութենէն որ ի Պարսկաստան ռուսական արտադրութեանց ներմուծումը բացառիկ կերպիւ քաջալերուի, և այս նպատակաւ, Պարսկաստան զրկուած բամպակայ ապրանաց վրայ բամպակի մաքն ետ տրուի ռուս գործարանատերաց, այսինքն՝ Մոսքուայի տարաղագործարաններուն նոյն չնորհն ընէ կառավարութիւնն ինչ որ ցարդ կ'ընէր շաքարի գործարաններուն՝ արտածեալ շաքարին տուրքն ետ տալով արտածիչ գործարաններուն։ Այս կերպիւ ռուս գործարանատերք կարող կը լինին Պարսկաստանի մէջ Անգլիացիներէն աւելի աժան ծախել բամպակայ ապրանքները։

* *

Թէհրանի ռուս դեսպան Տոլկորուքի իշխանին հրաժարման Զարին կողմէ ընդունելութիւնն, որ պաշտօնապէս ծանուցուեցաւ, տրամութեամբ կը լնու ռուս մամուլն, իբրեւ պաշտօնական խոստովանութիւն մը Ռուսիոյ ազդեցութեան տկարացման ի Պարսկաստան։ Սը Հէնրի Տրըմմնտ Ուոլֆ թէհրանի անգլիացի դեսպան կարգուած էր այնպէս ի ժամանակ մը երբ ռուսական ազդեցութիւնը գերակշիռ կը համարուէր հոն։ բայց անկէ ի վեր Մեծին Բրիտանիոյ դեսպանն իւր ռուս մրցակցին վրայ կարեւոր յաջողութիւններ տանելու բախտ ունեցաւ։

* *

Տարափոխիկ հարբուխը, զոր բժիշկներն Influenza կամ Grippe կ'անուանեն, ամենայն սաստկութեամբ կը ճարակի Փեթերսպուրկի մէջ, և Ռուսիոյ ուրիշ կողմերն ալ կը տարածի։ Թէեւ կ'ըսուի թէ 30-40 տարի յառաջ այսպիսի համաճարակ մը տեղի ունեցած է, բայց այսչափ սաստիկ հիւանդութիւն բնաւ չի յիշուիր։ Անոր յատկանիշերուն վրայ արուած տեղեկութեանց նայելով, մեզ ծանօթ Տանկին նման բան մ'է, և անոր պէս քանի մը օրեր կը տանջէ մարդը, բայց մահարեր չէ։ Զարէն սկսեալ, մեծ-դուքսեր, կայսերական գերդաստանի անդամներ, դեսպաններ, և ո՛չ միայն ազքատ ժողովուրդն այլ և բարեկեցիկ դասեր վարակուած են, և այս տեղեկութիւններն հեռագրող Թաշչի թղթակիցն ալ հազիւ քիչ մը ազատեցած և գրիչը ձեռք առած է՝ առանց հեռագրի չձգելու համար ընտանեան թերթը։ Ամէն տան մէջ հիւանդ կայ անպատճառ։ Շատ մը պաշտօնարաններու և գործարաններու մէջ աշխատութիւնք կիսովին կամ ամբողջովին դադարեալ են՝ պաշտօնէից կամ գործաւորաց հիւանդութեան պատճառաւ, և բովանդակ Փեթերսպուրկ չատ մեծամասնիկ կերպարան մը առած է։ Նոյմ. 30ին Ռիւպէնշթայնի և ընդ Նմին ռուսական երաժշտութեան յոբէլեանը կատարեցաւ, բայց յուսացուած փայլը չունեցաւ՝ տիրող համաճարակին պատճառաւ։ Ամէն օր ձմեռուան խիստ ցուրտերուն և սառնամանեաց կ'ըսպասէ, օրք միակ դարման են փեթերսպուրկի վատառողջ կլիմային։ Մոսքուայի և Թուլայի (Սիպերիա) երկոյ ուղեւորներ նոյն հիւանդութեան ճարակումը կը ծանուցանեն հաւասարապէս։

ՍԹԻՆԼԻ ԵՒ ԷՄԻՆ

Պելճիոյ թագաւորն, որ մեծաւ հոգածութեամբ կը դիտէր Պ. Սթենլիի արշաւանքն, և անոր տրամադրութեան ներքեւ դրած էր Քոնկոյի պետութեան նաւատորմիղ, հեռագիր մ'ուղղեց առ Պ. Սթենլի, ջերմաչէս շնորհաւորելով իւր ձեռնարկութեան յաջող վախճանն։ Այս հեռագիրը Պ. Սթենլի պիտի գտնէ ի Ծովեղը ինչնելուն պէս։

—Բարոյական փառքէն զատ, նիւթական յաջողութիւնք եւս կը պաշարեն զՊ. Սթենլի։ Լոնտոնի մեծամեծ դրամատունք և տպագրիչք հետաքրքիր են հրատարակելու այն գիրքն որով Պ. Սթենլի իւր արկածները պիտի պատմէ և իւր աշխարհագրական և ցեղագրական խուզարկութեանց արդիւնքը պիտի յայտնէ։ Արդէն կ'բուի թէ քանի մը հրատարակիչք ներկայացուցիչներ զրկած են ի Զանզիբար, հոն դիմաւորելու բախտաւոր երկրախոյզն, և ամենէն աւելի չահեկան առաջարկներ իրեն մատուցանելու։ Բայց միւս կողմէ ալ կը ծանուցուի թէ Պ. Սթենլի իւր գիրքն հրատարակելու իրաւունքն արդէն վաճառած է Սէմիսըն Լօ ընկերութեան, 40,000 անգլ. ոսկւոյ փոխարէն։ Նմանօրինակ առաջարկներ կը լինին Էմին փաշային, բայց մանաւանդ գիտական հրատարակութիւններ ընող տպագրիչներու կողմէ։ Լայպցիկի տպագրական մեծ տուն մը վաստակ իւր ներկայացուցիչը զրկեց ընդ առաջ Էմին փաշային ի Զանզիբար։ Կ'ըսուի թէ Էմին փաշա ժամանակաւ Թուրքիոյ մէջ ամուսնացած է, և թէ իւր կինն ու ընտանիքն երեսի վրայ ձգած է Սուտանի խորերը թաղուելուն առթիւ։ Եթէ սոյգ է, իւր ընտանիքն երջանիկ ընելու չափ արդէն հարուստ է Հասարակածային Աֆրիկէի նախկին կուսակալը։

* *

Պ. Սթենլի ձեռք ձգած է նամակ մը զոր 1888 տարւոյ աշնան ընդունած էր Էմին փաշա Սուտանցւոյ գԼԼ խաւորին զորավարէն՝ Էօմէր Սալիհէ։ Այս նամակ կ'երթայ Էմին փաշան բանտարկող ըմբոստ սպայից ձեռքն, որք Էօմէր Սալիհի երեք տուրհանդակները կը խոշտանգեն՝ Սուտանցւոց զինուորական ոյժին վրայ տեղեկութիւն ստանալու համար, և ի վերջոյ բերան կը սպանեն զանոնք։ Էօմէր Սալիհ իւր նամակաւ կը յորդորէ Էմին փաշան Սուտանցւոց դիմադրին կողմն յարելու, յիշեցնելով այս վերջնոյն զարմանալի յաջողութիւնները։ Կը թուէ Սուտանցւոց դէմ ճակատող բանակաց պարտութիւնը, մանաւանդ անգլիացի Հիքս փաշայի հրամանաց ներքեւ գտնուող եգիպտական բանակին փճացումը, Կորսան փաշայի պարտութիւնն և մահն, Հապէշաց Ցավ հանենէս թագաւորին պարտութիւնն և մահն, և կը ծանուցանէ թէ Սուտանցի զօրքեր ցրուեալ են ամենուրեք, ի Հապէշասան, ի Սուաքին և ի Վասի-Հալֆա։—Պ. Սթենլիի ձեռքն ինկած են նաեւ երեք վերջին նամակները զոր Էմին փաշային զրկած էր եգիպտական ծառայութեան մէջ գտնուող անգլիացի Լրփիթն պէյ, կառավարիչ Կապոյտ Նեղոսի Նահանգին։ 1884 տարւոյ դարնան մէջ գրուած այս նամակներով, Լրփիթն պէյ կը ծանուցանէ Սուտանցւոց մեծ զօրութեան մը մերձենալն, և իւր զօրաց մէկ մասին դասալքութեան հակառակ, յոյս կը յայտնէ մինչեւ վերջը դիմադրելու։ Բայց վերջին նամակաւ կ'ըսէ. «Բանս լմնցաւ։ Իմ մարդիկս Սուտանցւոց կողմն անցան, որք վաղայաղորդ օրը կը տիրեն իմ գաւառիս։ Ձեզ կրնար երեւակայել թէ ի՞նչեր քաշեցի այս վերջին մի քանի աւուրց մէջ։ Նամակաբերս բերանացի տեղեկութիւն պիտի տայ ձեզ։ Կ'իմանամ թէ երբեք բանակ մը չէ կրած պարտութիւն նման Հիքս զորավարի բանակին կրած պարտութեան։ Իւր 16,000 զօրքերէն 52 հոգի միայն ազատած են և անոնք ալ վիրաւորեալ են ըստ մեծի մասին։ Ուշադրութիւն ընէք, զի լաւ զինեալ ութ-տասն հազար Սուտանցիք ձեր վրայ կը յառաջանան։ Ցուսալով որ ի մօտոյ իրարու հանդիպինք,

Ձերդ Ց. Լրփիթն

Լրփիթն պէյ յետոյ դիրի ինկաւ Սլաթին պէյի հետ միասին, և այս վերջնոյն մէկ նամակէն ասկէ յառաջ լեսափոխանք այս նոտայրջանին եւս մասնակցած չլինելով, նոր ընթերցութիւնք պիտի կատարուին։

* *

Անգլիակերտ Սեն Նաֆ-Դիլմատիոյ նահանգային ժողովոն քաղաքական միացումը Թրուսիոյ հետ, և Թիրոլի նահանգային ժողովոն քաղաքական միացումն, որով կը յանձնարարէ Թիրոլի հարաւակողմն իտալեան Թրենթինոյի մը կազմութիւնն իբրեւ իտալեան ուրոյն նահանգ։ Թիրոլի Գերմանաց և Իտալացոց մէջ հակառակութիւնն այժմ նոր ուժգնակ սաստիկ է։ Գրգռափ Պոհեմիոյ Զէհերուն և Գերմաններուն միջեւ, և Գերմանք ի Թիրոլ՝ ձանձրանալով այս պառակտումներէն՝ այն եզրակացութեան եկած են թէ «փոխադարձ հաճութեամբ՝ ամուսնացումը» լուծումն է, և հետեւապէս կը փափաքին որ Թիրոլի իտալական մասն իտալեան առանձին ժողով և կազմակերպութիւն ունենայ։ Աւստրիացի քաղաքագէտք ոմանք կը խորհին թէ պոհեմական խնդրոյ լուծումն եւս համանման եզանակաւ մը կրնայ գտնուիլ, Պոհեմիոյ չեխական մասը գերմանական մասէն անջատելով։

Բայց Զէհք, թէև իրենց մէջ պառակտեալ, մէկ մարդու մը պէս համախմբեն սա կէտի վրայ թէ Պոհեմիոյ մէջ Գերմանք օտարամուտ տարր մ'են, և չեխական հաստատութիւնք և մեր լեզուն պէտք է գերակշիռ տիրեն ընդհանրապէս Պոհեմիա։

* *

Փոլոնիոյ մէջ, ի Վլոցլաւէք, Փոլիքոմպի անուն մարդ մը մեռաւ 115 տարեկան։ Մանանոցեան եկեղեցական ծերութեան պատերազմց և Մեծին Նափոլէոնի ռուսական պատերազմին։ Դեռ անցեալ տարի արտին մէջ կ'աշխատէր։ Այս հայր 126 տարեկան մեռած է։ Իւր կղզայոց մին՝ 116 տարեկան։ Երեք քոյրեր կը թողու 102, 98 և 93 տարեկան։

* *

Անցեալները ծանուցինք թէ Աւստրիոյ գահաժառանգ Ֆրանց Ֆերտինանտ իշխանն արքունի Հոֆֆի գաստեր հետ նշանեալ խորհուրդ կայ։ Նոյն լուրն տուն գուած է այժմ, և նշանախօսութիւնը պաշտօնապէս պիտի հռչակուի փետր. ամսոյն։ Ռուսական գաժանա գահաժառանգին մանուկ առաջին տարեդարձէն ետքն։ Աւստրիոյ տպագրագրկոյրներն, արքունի սուի Մարիա Տորոթէա, թառն է Բլեմանթին իշխանուհւոյ, և հետեւապէս Պուլկարիոյ Ֆերտինանտ իշխանն Աւստրիոյ տպագրագրկոյրներուն մերձեղարը կը լինի։

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ ԱՈՒՐՀԱՆԳԱԿ

Փարէզ, 4 դեկտ. — Փեթերսպուրկէ կը հեռագրուի առ Թաշ թէ Զարը թեթեւապէս հիւանդ է։ կը կարծուի թէ Փեթերսպուրկի մէջ տիրող համաճարակը Տանկ տենդն է։

—Փարէզ, 4.—Ֆերակոնին մէջ Պ.

16

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԺԻՒԼ ՄԱՌԻ

ԿՈՐՈՒՍԵԱԼ ԴՐԱԽՏ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՄԱՑՈՐԱԿԱՆ ՈՃԻՐ ՄԸ

Վէրքէն արեան գիծ մը կը հոսէր միշտ։ Իւրպէն յարեց։

—Դու իր է գանգատելու պատճառ մը չունիս, Ֆէրնանտ։ Ասկից զատ, եթէ նոյն իսկ մեր մահացու թշնամին եղած ըլլար, մեր պարտականութիւնն է այլ ևս չյաղաղեցնել անոր գալուստը։

—Ճշմարի՛տ է, պատասխանեց կինը։ Եւ ցած ձայնով մրմնջեց։

—Ատուա՛ծ իմ, պաշտպանէ զիս։

Սպասաւոր մը ձիով Սէրտոն գնաց։ Երբ բժշկին տանը առջեւ հասաւ, սա իր պտոյտէն նոր վերադարձած, կառքէն վար կ'իջնէր։

Արկածն խմանալուն պէս, վերտին կառք նստաւ և Պէրժերոյի ճանբան բռնեց։

Կոմսն ու կոմսուհին սենեկին մէջ կը գտնուէին, հիւանդ մ'նկան քով, երբ տոքթորը ներս մտաւ։

Առանց յուզման չէր որ թշուառականը ոտք կը կոխէր այդ դղեկին մէջ ուր անպատուութեան արատ մը թողած էր, և վերտին կը տեսնէր այդ խուցն, ուր եօթը տարի առաջ, միևնոյն օրը, կոմսուհին՝ խելայեղ իր ոտիցը փարած էր չնորհ հայցելու համար։

Ներս մտաւ, թեթեւապէս գլուխը խոնարհեցուց, առանց նայելու ո՛չ Ֆէրնանտի ո՛չ Իւրպէնի երեսն, և ուղղակի անկողնոյն քով գնաց։

Կոմսուհին, աչքերը գետին խոնարհած, աւելի դժգոյն քան մանուկն որուն արիւնը կը հոսէր բաց վէրքէն, չըմմնեցին յենած էր։ Այլ եւս չէր մտածեր նօրէլի վրայ, այն վտանգին վրայ որուն կրնար մատնուիլ խեղճ տղան, արեանը վրայ որ կարմիր ներկած էր անկողինը։ միակ տեսարան մը կը նկարուէր իր աչաց առջեւ, նմանօրինակ գիշեր մը, Անտրէ Թիկնաթոռին վրայ։ մահաբեր, դուրսը ձիւն եւ ցուրտ։ Ծննդեան ծառը՝ ժապաւէններով զարդարուած եւ խաղալիկներով բեռնաւորեալ։ Իւրպէն՝ բացակայ։ Ռընօտիէռ՝ հեգնոտ, դաժան, անողոք։ ինք արտասուալից եւ խելացնոր։

Ոչինչ կը լսէր, բայց եթէ բժշկին խօսքերն որք կենացը մինչեւ վերջը պիտի հնչէին իւր ականջին։

«Կը սիրեմ զձեզ։ Ո՛չ ձեր գոհարեղէններն ու ո՛չ ձեր հպատութիւնը կ'ուզեմ, այլ զձեզ միայն։»

Եւ այդ մարդն էր զոր կը տեսնէր վերտին, այդ վայրկենին, նօրէլի՝ իր զաւակին՝ անկողնոյն վրայ հակած։ Ինչո՞ւ երկինք չէին ընկեր զայն։ Ուրեմն երկինք կը պաշտպանէի՞ն լրբութիւնն ու ոճիրը։

Վիլլատոն իր կինը կը դիտէր այդ վայրկենին։

Եւ Ֆէրնանտի ակնարկն, այն ակնարկը զոր ուղղած էր բժշկին վրայ, այնքան ակներեւ ցոյց կուտար իր ատելութիւնն, որ կոմսը սարսուռ մը ունեցաւ։

Բայց չէր կրնար հակնալ։

—Հարիւր մահն անոր կը վերագրէ, ըսաւ ինքնին։ այս պատճառաւ ահա կ'երկնչի անկից և կ'ատէ զայն։

Ֆէրնանտ զգալով որ ամուսինը զինքը կը դիտէր, աչքերը փակեց։

Ռընօտիէռ դէպ ի կոմսը դարձաւ։

—Բան մը չէ, ըսաւ։ անվտանգ հեղգուածք մը։ սակայն տղան չատ արիւն կորուսած է, բաւական ժամանակ տկար պիտի մնայ։ անհոգ եղիք։

Վէրքը կապած էր։ դեղագիր մը գրեց։

—Պէտք եղածն հիմա կը զրկեմ ձեզ, ըսաւ։ ուրն օրէն վէրքը կը գոցուի։ Եւ տեսէ՛ք, տիկին յարեց, խօսքը կոմսուհւոյն ուղղելով—ահա կենդանութիւն կ'առնու, զձեզ կը դիտէ և ձեզ կը ժպտի։

Ֆէրնանտ անկողնոյն մօտեցաւ և նօրէլը համբուրեց։

Այս միջոցին, Ռընօտիէռ Վիլլատոնի կը մօտենար։

—Պարոն, ըսաւ, պահ մը առաջ երբ դղեակ կը մտնէի եւ փանդակորմէն կ'անցնէի, ձիս՝ անպիտան կենդանի մը զոր շատոց մեկդի դնելու էի, գետին ինկաւ եւ կառքս չրջեց։ Ձիւնին մէջ նեռուեցայ ուրուն թանձրութիւնը պատասխանեց զիս ամէն վտանգէ։ Սակայն կառքս խորտակեցաւ։ կը համբ՝ք զիս Սէրտոն փոխադրել տալու ազնուութիւնն ունենալ։ Ուշ մնացած եմ արդէն։ Այնքան այցելութիւններ ունիմ, այնքան հիւանդներ կային դարմանելիք, որ առաւօտուն կանուխ մեկնեցայ տունէս եւ ճաշած ալ չեմ։

—Կառքս լծել կուտամ հիմայ, պարոն, ըսաւ կոմսը։

Եւ դուրս ելաւ հրամաններ տալու համար։

Ռընօտիէռ եւ Ֆէրնանտ առանձին մնացին։

Նօրէլ՝ արեան հոսումէն տկարացած՝ աչքերը փակած էր վերտին, և մօրն համբոյրներուն ազդեցութեամբ քնանալու երեւոյթ մը ունէր։

Բժշկին ու մանկամարդ կինը վայրկան մը իրարու երես նայեցան լռելեայն։ Եւ Ռընօտիէռ մրմնջեց ցած ձայնիւ.

—Եօթը՝ տարի կայ։

Ֆէրնանտ կրկնեց, իրր արձագանգ մը։

—Եօթը՝ տարի։ Խիստ դիշեր մը այս օրուան նման։

—Այո՛։ Բան մը պիտի հարցուցեմ ձեզ, միակ բան մը։

—Լռեցէ՛ք, պարոն։ Ձեր ներկայութիւնն իսկ ամօթահար կ'ընէ զիս։ Եւ բոլոր ատելութիւնս, վրէժխնդրութեան բոլոր տենչս սիրոս կ'ելլեն։

—Դուք վրէժ չպիտի լուծէք։ Վրէժ լուծելու համար, ամէն բան ձեր ամուսնոյն յայտնելու պիտի հարկադրուիք։ Եւ ես ապահով եմ, այնքան կը սիրէք ձեր իմացուած է արդէն թէ Լրփիթն պէյ դերութեան չէ դիմացած և մեռած է։

Էմին փաշա, ինչպէս Լրփիթն պէյ, Սլաթին պէյ և ուրիշներ, Կորսան զորավարի գործակիցներն էին, որք բանտն Խարթումի անգլիագիպտական կուսակալին կը կառավարէին Տարֆուրի, Կապրայ Նեղոսի և Սպիտակ Նեղոսի երկիրներն։ Ասոնց մէջ բախտաւորն է Էմին փաշան եւեթ, որ վերջապէս ազատ կը վերադառնայ յեւրոպա։

ԴԻՊԵՐԸՆ ԾԱՒՍՏԻԱ-ՀՈՒՆԳԱՐԻԱ.

Պոհեմիոյ նահանգային երեսփոխական ժողովոն մէջ ազգային վիճաբանութիւն մը տեղի ունեցաւ, այն առաջարկութեան վրայ թէ Գրակայի թանգարանին մէջ յիշատակարան մը դրուի ի պատիւ Պոհեմիացի նահատակ Յովհաննէս Հիւսի, որ իւր կրօնական և իմաստասիրական դաւադրաց ազատութեան համար զոհ եղաւ պապական տիրապետութեան։ Առաջարկին ոյժ տուին Տ.ր Դ. Կրեկր և Երիտասարդ Չեհ կուսակցութիւնն, և հակառակեցաւ ծեր Չեհ կուսակցութիւն։ Այս պահպանողական կուսակցութեան կողմէ ատատուածաբանութեան դասախօս մը դիտեց թէ Յովհաննէս Հիւս պէտք է նկատուի իբրեւ կաթոլիկ եկեղեցւոյ դէմ ընդդիմութեան մարմնացումն, եւ իբրեւ հրդիպ ջանն որ մոլորութիւն ուսերում մուծած է աստուրեան Տէրութեան մէջ։ Ասոր վրայ ժողովականք ոմանք ազատակեցին։ «Եթէ ձեզ մեռ, ա՛յսօր իսկ կրակի կուտայիք զՀիւս»։ Տ.ր Թ. Կրեկր պերճ բանախօսութեամբ մը ցոյց տուաւ որ եթէ Պոհեմիա չէ գերմանացած և իւր ազգային յատկանիշը պահած է՝ Յովհաննէս Հիւսի շնորհիւն է։ Հիւս պահեց չեհ լեզուն և անոն ճանաչեցաւ Պոհեմացոց պարտաւորութիւնն է Հիւսական լմնել։ Ասոր վրայ Քարլ Նեվերցենպերկ իշխան փոքրիկ մը յարոյց ժողովոյն մէջ, յիշեցնելով թէ ինք սերունդն է այն Ռոզենպերկներուն որոց նշանակը՝ վարդ կաթոլիկաց նշանակն եղած է Հիւսականաց դէմ պայքարին մէջ։ Իշխանն յարեց։ «Հիւսականաց մէջ պարկեշտ մարդիկ քիչ կային, և չատ չանցած ամէնքն ալ աւարաց խումբ մ'եղան»։ Յեսնելով խիստ ընդմիջումներն, իշխանն յարեց։ «Այո՛, և այսօր իսկ ուրախութեամբ ձեզ դէմ պիտի պարզէի, այս օրուան նոր-Հիւսականացդ դէմ, Նովոցենպերկներու կապոյտ և սպիտակ դրօշը։»

Նկատելով որ նահանգային ժողովոյ նստոյն մէջ գերման երեսփոխանք խմբովին բացակայ էին, Յովհաննէս Հիւսի վրայ սոյն վիճաբանութիւն կը ցուցնէ թէ նոյն իսկ Զէհերուն մէջ համաձայնութիւն չկայ։ Ցիշատակարանի առաջարկը մեծամասնութեամբ մերժուեցաւ, բան մը որ Զէհերուն մէջ ազատական կուսակցութեան տկարութիւնը կը ցուցնէ։ Ցետ քուէարկութեան, նահանգային ժողովոյն նստաշրջանը փակեցաւ։ Գերման երեսփոխանք այս նստաշրջանին եւս մասնակցած չլինելով, նոր ընթերցութիւնք պիտի կատարուին։

* *

Ինանակերտի Սեն Նաֆ-Դիլմատիոյ նահանգային ժողովոն քաղաքական միացումը Թրուսիոյ հետ, և Թիրոլի նահանգային ժողովոն քաղաքական միացումն, որով կը յանձնարարէ Թիրոլի հարաւակողմն իտալեան Թրենթինոյի մը կազմութիւնն իբրեւ իտալեան ուրոյն նահանգ։ Թիրոլի Գերմանաց և Իտալացոց մէջ հակառակութիւնն այժմ նոր ուժգնակ սաստիկ է։ Գրգռափ Պոհեմիոյ Զէհերուն և Գերմաններուն միջեւ, և Գերմանք ի Թիրոլ՝ ձանձրանալով այս պառակտումներէն՝ այն եզրակացութեան եկած են թէ «փոխադարձ հաճութեամբ՝ ամուսնացումը» լուծումն է, և հետեւապէս կը փափաքին որ Թիրոլի իտալական մասն իտալեան առանձին ժողով և կազմակերպութիւն ունենայ։ Աւստրիացի քաղաքագէտք ոմանք կը խորհին թէ պոհեմական խնդրոյ լուծումն եւս համանման եզանակաւ մը կրնայ գտնուիլ, Պոհեմիոյ չեխական մասը գերմանական մասէն անջատելով։

Բայց Զէհք, թէև իրենց մէջ պառակտեալ, մէկ մարդու մը պէս համախմբեն սա կէտի վրայ թէ Պոհեմիոյ մէջ Գերմանք օտարամուտ տարր մ'են, և չեխական հաստատութիւնք և մեր լեզուն պէտք է գերակշիռ տիրեն ընդհանրապէս Պոհեմիա։

* *

Փոլոնիոյ մէջ, ի Վլոցլաւէք, Փոլիքոմպի անուն մարդ մը մեռաւ 115 տարեկան։ Մանանոցեան եկեղեցական ծերութեան պատերազմց և Մեծին Նափոլէոնի ռուսական պատերազմին։ Դեռ անցեալ տարի արտին մէջ կ'աշխատէր։ Այս հայր 126 տարեկան մեռած է։ Իւր կղզայոց մին՝ 116 տարեկան։ Երեք քոյրեր կը թողու 102, 98 և 93 տարեկան։

* *

Անցեալները ծանուցինք թէ Աւստրիոյ գահաժառանգ Ֆրանց Ֆերտինանտ իշխանն արքունի Հոֆֆի գաստեր հետ նշանեալ խորհուրդ կայ։ Նոյն լուրն տուն գուած է այժմ, և նշանախօսութիւնը պաշտօնապէս պիտի հռչակուի փետր. ամսոյն։ Ռուսական գաժանա գահաժառանգին մանուկ առաջին տարեդարձէն ետքն։ Աւստրիոյ տպագրագրկոյրներն, արքունի սուի Մարիա Տորոթէա, թառն է Բլեմանթին իշխանուհւոյ, և հետեւապէս Պուլկարիոյ Ֆերտինանտ իշխանն Աւստրիոյ տպագրագրկոյրներուն մերձեղարը կը լինի։

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ ԱՈՒՐՀԱՆԳԱԿԻ

Փարէզ, 4 դեկտ. — Փեթերսպուրկէ կը հեռագրուի առ Թաշ թէ Զարը թեթեւապէս հիւանդ է։ կը կարծուի թէ Փեթերսպուրկի մէջ տիրող համաճարակը Տանկ տենդն է։

—Փարէզ, 4.—Ֆերակոնին մէջ Պ.

Դեպ ի անկողինը դարձաւ։ մանկիկ նօրէլ փիրնքը կը դիտեր, աչքերը գամուած երկոքին վրայ։

—Բարը, իսկապէս ինչպէս ես։

—Լաւ մ'եմ։

—Կրնայ ըլլալ որ լաւ ըլլայ։ բժիշկը։ Բայց անհոգ եղիք։ գործերին մէջ շուտով կը մոռնան, եւ արդէն բան մը չէ հակցած։

Դրան ետեւէն չուկ մը լսուեցաւ։

—Վիլլատոն ներս մտաւ։

Քիչ մը գունատ էր և կասկածոտ ակնարկ մը ուղղեց տոքթորին ու Ֆէրնանտի վրայ։

Ռընօտիէռ պարարութեամբ կը հանդուրժէր այդ ակնարկին։ Իր կեցուածքին մէջ ծայրայեղ լրբութիւն մը կար։

Իսկ Ֆէրնանտ՝ մանկան անկողնոյն վրայ հակած կրնան ամուսնոյն դարձուցած էր։

Այս կերպով ժամանակ կ'ունենար դէմքը չտեսնելու և ինքզինքը գտնելու։

Զարձգարար համբուրեց զաւակը։

Կարծես կ'ուզէր, ամէն բանէ առաջ, անոր ներողամտութեանը արժանանալ։

Վիլլատոն, վայրկեան մը առաջ սենեկին դրան առջեւ հանդիպելով, Ռընօտիէռի ու Ֆէրնանտի խօսակցութեան մէկ քանի բառերը լսած էր, ո՛չ թէ յստակ կերպով, այլ կիսաւոր պարբերութիւններով, որք իր ականջին հասած էին, երբ Ռընօտիէռ կամ Ֆէրնանտ խօսած ժամանակներն երեսներն դրան կը դարձուէին։

(Շարունակելի)

Մարսել Պարթ առաջարկութիւն մը մատոյց, որով կը խնդրէ Հանրապետութեան Նախագահին, նախ քան թոռներդարանի անդամոց և հանրային պաշտօնեից դէմ ուղղեալ լրագրական վատահամբաւութիւններն ենթարկել պատժական դատարանաց իրաւասութեան, փոխանակ երդուելոց առ ի դատելու, որպէս ցարդ։

—Փարիզ, 4։— Միլան թագաւորը ներկայացաւ արտաքին գործոց նախարար Պ. Սիֆլէրի, և դիտաւորութիւն յայտնեց ի Փարիզ բնակելու որպէս պարզ անհատ, առանց քաղաքական եղելութեանց խառնուելու։

—Փարիզ, 4։—Անգլիական ընկերութիւն մը Ֆրանսայի հանրային շինութեանց նախարարութեան մատոյց ծրագիր մը, որով արտօնութիւն կը խնդրէ Մանչի ծովուն վրայ կամուրջ մը շինելու ընդ մէջ Ֆրանսայի և Անգլիոյ։

—Լոնդոն, 4։— Սրճեռարդ Օտեսայէ հեռագիր մը կը հրատարակէ, ծանուցանող թէ նոր յաւելում մը պիտի լինի Սեւ ծովու ռուսական նաւատորմին վրայ, և կաւկասեան զօրքերը ծովու ճամբով պիտի ղրկուին Ռուսիոյ հարաւային և արեւմտեան սահմանաց վրայ։

—Լոնդոն, 4։—Լեմին փաշա և Պ. Սթէնլի այսօր հասան Պակամոյօ, քաղաք արեւելեան Ափրիկէի, ընդ գերմանական իշխանութեամբ։

—Վիեննա, 4։— Աւստրիոյ եկեղեցական նախարարն հաւանեցաւ որ պուլկարական փոխառութեան արժեթուղթերը Վիեննայի Սակարանն ընդունուին։

—Փեթերսպուրգ, 4։— Պաշտօնական լրագիրը կը ծանուցանէ թէ Պ. Պիւցով թէհրանի ռուս դեսպան կարգուած է, և Պ. Օնու՝ Աթէնքի դեսպան։

—Հռոմ, 4։—Տքթ. Ռաթածզի, որ իտալեան կառավարութեան ներկայացուցիչն է Եթիովպիոյ Մենելիք թագաւորին թագադրութեան հանդիսին, պաշտօնապէս գրած է թէ ռուս Պ. Մարքով զէնքեր նուիրեց Մենելիք թագաւորին և առաջարկեց որ Եթիովպական դեսպանութիւն մը ղրկուի Ռուսիոյ արքունեաց։ Բայց Մենելիք մերժեց, և Պ. Մարքով մեկնեցաւ։

—Պեռլին, 4։—Փեթերսպուրգի սը-լաւական բարեսիրական ընկերութիւնը 6,000 ռուբլ ղրկեց չեռնակորացի գաղթականաց համար։

—Ռուսչուքը, 4։—Նախագահ Հարրիսընի պատգամաւորին, որ թոռներդարանի բացման առթիւ կարգաւորուեցաւ, կը յայտարարէ թէ Անգլիոյ և Ամերիկայի միջեւ ծագած խնդիրք կարգադրման ճամբու մէջ են, և կամ առկախ կը մնան։ Գերմանիոյ հետ ևս յարաբերութիւնք լաւ են։ Հպատակութեան խնդիրն երկուց կառավարութեանց համար գոհացուցիչ կերպիւ կարգադրուած է։ Եկամտայոյն 57 միլիոն տոլարի հասութից առաւելութիւն կը ցուցնէ, և հետեւապէս տրոց և մանաւանդ մաքսատրոց զեղչ մ՚ընել կարելի է։

—Դանուբ սկսած է սառիլ, և նաւարկութիւնը մէկ քանի օրէն կը խափանի բոլորովին։

ԱԶԳԱՑԻՆ ԼՈՒՐԵՐ

ՖոռԷրլանդ (Vaterland), Վիէննայի հռոմէական դլխաւոր թերթը լիովին համամիտ կը գտնուի Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքի այն շրջաբերականին որ կը դատապարտէր և կ՚արդելուր դրամ-ժիտի սովորութիւնը։ Արդարև կը յարէ կաթոլիկ թերթը, ամուսնութիւնը, պէտք է բարոյական հաստատութիւն մը ըլլայ և ո՛չ թէ դրամ ընդունելու միջոց մը։ Սակայն, ասով հանդերձ, ամուսնութիւնն իր բոլոր արժանաւորութեան, իր բոլոր սրբութեան մէջ պահպանելու համար Հայոց Պատրիարքին չանքերը ապարդիւն պիտի մնան, կըսէ ՖոռԷրլանդ, վասն զի, դժբաղդաբար, դրամագլուխն որ ամենայնի տէր է այժմ, յոյժ նպաստաւոր է դրամ-ժիտով ամուսնութեանց։ (Մանկէոն)

Խորին ցաւօք կը ծանուցանենք թէ լրագրոյս խմբագիրներէն Լեւոն Եփ. Բաշալեանի կրտսեր եղբայրը՝ ՏԻՐԱՆ ԲԱՇԱԼԵԱՆ յետ սակաւօրեայ հիւանդութեան իւր մանկանացուն կնքեց այս գիշեր ի տասնեւինամեայ ծաղկի հասակի։ Յուղարկաւորութեան տխուր հանդէսը պիտի կատարուի վաղը, շաբաթ, ժամ 5ին, ի Ս. Խաչ եկեղեցւոյ Սկիւտարի ուստից մայրմնը պիտի փոխադրուի դիւղին գերեզմանատունը։

Հանգուցեալը բարեկիրթ և ուսեալ երիտասարդ մին էր, ազնիւ ձիրքերով օժտեալ, դեղեցիկ ապագայ մը ունենալով իւր առջեւ։

Խմբագրութիւնս իւր խորին վըշտակցութիւնը կը յայտնէ Բաշալեան ընտանեաց այս դառնաղէտ կորստեան համար։

ԴԱԼՖԱՑԵԱՆ ՈՐՔԱՆՈՑ

Յառաջիկայ կիրակի օր, Նոյ. 26, ԴալֆՖաեան Որքանոցին 2ԿԷ տարեդարձի առթիւ Սմանն. Սրբազան Պատրիարք Հօր հրամանաւ գիշերս բարեխոսութիւն քարոզիչ՝ Արժ. Տ. Յակոբ Ծ. Վարդապետ Աշտարակեցի է յատուկ Ս. Պատարագ մատուցանել և պաշտօն կատարել ի Ս. Մատենադարանի եկեղեցւոյ ի հանդիսաւոր հաստատութեան հանգուցեալ բազմերախտ հիմնադրին և համայն բարերարաց ննջեցելոց։ Յետ աւարտման Ս. եկեղեցւոյ, Որքանոցին մէջ տեղի պիտի ունենայ տարեկան սովորական խաչհանդիսան։

Յուսալով որ, ամէն բարեսէր Ազգայինք նոյն օր իրենց Պատրիարքութեամբ պիտի հաճին մասնակցիլ հաստատութեան վաստակիր պատասխանատուներն, կը փութամ այժմէն մատուցանել խորին շնորհակալութեան հաստատին։

Որով մնամ յաւէտ շնորհապարտ

ԵՐԱՆՈՒՇԻ ՊԱՏՐԱՊԵՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

Տեսուչ Մայր Գոլֆ. Աղջկանց Որքանոցի

1889 Նոյ. 23 Խասգիւղ

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Ի Նպաստ Խասգիւղի Ս. Ներսէս եան վարժարանին կազմակերպեալ թատերական ներկայացումն, որ տեղի պիտի ունենայ յառաջիկայ կիրակի, ի Նոր Թատրոն Բերայի, մեծ փայլ և յաջողութիւն կը խոստանայ։ Ներկայացման կրթասիրական նպատակն ինչպէս նաեւ Պ. Ադամեանի և այլ արուեստագիտաց մասնակցութիւնը կը-կին գրգիռ մը եղած են ազգայնոց՝ սիրայօժար ընդունելու իրենց ղրկըուած տոմսերն։ այժմէն գրեթէ բոլոր օթեակք ու թիկնաթոռք վաճառուած են, և եթէ այդ չքեղ ներկայացման ներկայ գտնուիլ փափաքողներ կը գտնուին տակաւին, փութալու են ապահովել իրենց տեղերը։ Մինչեւ կիրակի թերեւս ժամանակն անցած ըլլայ։

ՄԵՍՐՈՊ ՆՈՒՊԱՐԵԱՆ

—

Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

ՅՐԱՆՍԵՐԷՆ ՀԱՅ ԱՇԽԱՐՀԻԿ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Դ. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ

Հրատարակուեցաւ 21րդ թերթն որ կը հասնի մինչեւ élancement բառը։ 471

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՍՏԻՃԱՆԵՐ ԵՒ ՊԱՏՈՒԱՆԵՆԵՐ

Իւլսյի առաջին աստիճան տրուեցաւ Հ-ՀՀ-Կ-Լ-ԹԱՆ Դ-ասնի քաղաքացիներէն ձէմալ պէյի։

—

Առաջին կարգի Մէճիտիյէ պատուանշան տրուեցաւ գերմանացի դերասանը Պ. Պլայերէստերի և Վասիկանի անգլիական դեսպան Սիմոնս զօրավարին։

Երրորդ կարգի Մէճիտիյէ՝ Զ. զօրաբանակի առաջին բժիշկ դնդապետ Իպրահիմ պէյի։

Երրորդ կարգի Օսմանիյէ՝ նոյն զօրաբանակի կեդրոնական հիւանդանոցին առաջնակարգ բժիշկ տեղակալ-դրնդապետ Ասպի պէյի և չորրորդ կարգի Մէճիտիյէ նորա օգնական Իպրահիմ Շեվգը պէյի։

Զորրորդ կարգի Մէճիտիյէ՝ նոյն զօրաբանակի 43րդ գնդի 4րդ վաշտին բժիշկ հազարապետ Յովսէփ էֆէնտիի և 11րդ վաշտին բժիշկ հազարապետ Արթին էֆէնտիի։

Հինգերորդ կարգի Մէճիտիյէ՝ նոյն զօրաբանակի հեծելազօրաց 32րդ գընդին դեր-հազարապետ Տիրան էֆէնտիի և 41րդ գնդի 3րդ վաշտին բժիշկ դեր-հազարապետ Սիմոն էֆէնտիի։

—

ԹՈՒՐԲԻՆ ԵՒ ՇՈՒԷՏ

Օսքար թագաւորը Կ. Պոլսոյ շուէտական դեսպանին միջոցաւ շնորհակալութիւն յայտնած է առ Վեհ. Սուլթանն այն սիրալիր ընդունելութեան համար զոր հաճած էր ընել Ֆրէյա մարտանաւուն հրամանատարին և սպայից։

—

Պ. ՕՆՈՒԻ ՅԱՋՈՐԴ

Քօրֆուի ռուսական ընդ. հիւպատոս Պ. Եատովսքի Կ. Պոլսոյ ռուսական դեսպանատան խորհրդականի պաշտօնին կոչուած է Պ. Օնուի տեղ, որ ինչպէս յայտնի է, Աթէնքի դեսպան անուանուած է։

Պ. Եատովսքի ծանօթ է ի Կ. Պոլիս ուր ռուսական դեսպանատան երկրորդ քարտուղարութիւնը վարած է Լօպանոֆ իշխանին դեսպանութեան ժամանակ։

ՍԿԻՒՏԱՐԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՒ

Սկիւտարէն Զամլըճա շինուելիք երկաթուղոյ յատակաձեւն Սպարապետի Դուռը ղրկուած է որպէս զի քննուի ռազմագիտական տեսակէտով, որովհետեւ կը խորհուի այդ գիծն երկարել մինչեւ ի Պոլու և անտի Էրէյլի, ընդ ամենն 300 միլիօնեղբ երկայնութիւն։ Ծովային նախարարութիւնն որ կը շահագործէ Էրէյլիի ածխահանքերն, յայտարարած է թէ ինք ո՛չ միայն չընդդիմանար այսպիսի երկաթուղւոյ մը շինութեան, այլ և գոհ կը մնայ միայն պայման մը դրած է՝ որուն համեմատ երկաթուղին ճիւղ մը ունենայ մինչեւ ածխահանքերը, գլխաւոր գծին հետ հաղորդակցող։

Սոյն շինութեանց մենաշնորհն, ինչպէս յայտնի է, տրուած է Սկիւտարի կառավարիչ Պահրի փաշայի։

—

Ի Բ. ԴՈՒՌՆ

Ելմտաղոյցի յանձնաժողովն երէկ ևս ի նիստ դումարեցաւ։ Ի Բ. Դուռն ընդ նախագահութեամբ Բարձր. Մեծ-Եպարքոսին և ի ներկայութեան Ներքին, Դատական, Ելմտական և Առևտրական ու Հանրօգուտ շինութեանց Վեհ. Նախարարաց։

—

ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

Աւստրիական դեսպան Պառոն տը Քալիչէ երէկ գիշերքան և չորս հրաւիրելոց հայկերոյթ մը տուաւ դեսպանատան մէջ։ Հրաւիրեալք էին օտար դեսպանք ոմանք և դեսպանատանց պաշտօնեայք։

—

ԶԻՒՆԷ ՊԷՑ

Հռոմի օսմանեան նոր դեսպան Զիւնա պէյ մէկ քանի օրէն Պէլկրատէն մայրաքաղաքս պիտի դայ, ասկից անմիջապէս իւր նոր պաշտօնատեղին ուղեւորելու համար։

—

ԵԼՄՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Վերոտին խնդիր եղած է, կ՚ըսէ Լ. Հէրալտ, ընդել ելմտական նախարարութիւնն ժողովը։ Այս մտօք առաջարկութիւն մը մատուցուած է նախարարաց խորհրդոյն։ Եթէ յիշեալ ժողովոյ ընդունելի որոշուի, անոր պաշտօնը պիտի կատարեն Մալիէի դիւանապետք, այդ նախարարութեան խորհրդականին նախագահութեամբ։

—

ՇԷՐԻՖ ՊԷՑ

Փարիզու օսմանեան դեսպանատան զինուորական կցորդ կարգուած է Պրիւսէլի օսմ. դեսպանատան զինուորական կցորդ հազարապետ Շերիֆ պէյ, որ միանգամայն կը պահէ իւր առաջին պաշտօնը։

—

ԲԵՐԱՑԻ ԿՈՂԱՐԱՆԸ

Պոլսոյ կողարանին պատօնատէրը Բերայի կողարանին մենաշնորհն եւս խնդրած է։ Թէպէտ կիմանայ թէ որոշուած է տալ այդ մենաշնորհն հիմնական նպաստաւոր պայմաններով։ Թուրք թերթերը երկրին օգտակար կը գտնէ այս որոշումն, բսելով որ Բերայի կողարանն արդէն բարւոքման կարօտ և նորոգութիւնն ալ երկար ժամանակէ ի վեր որոշուած էր։

—

ՄԱՐԴԱՐԵԱՆ ՅՈՊԱՆ

Այս աւուր Հ-ՀՀԷ-ի մէջ կը կարդանք թէ նախնական ատենի կողմէ, տպարանատէր Մարդարեան Վահրամ էֆէնտիի դէմ տրուած որոշումն, ի մասին առանց հրամանի գրքերու հրատարակութեան, նախընթաց օր քննուեր է վերաքննիչ ատենի պատժական ճիւղին առջեւ։ Ատեանն, ըստ տրամադրութեան 10րդ յօդուածի երկրորդ մասին տպարաններու օրինաց և 138րդ յօդուածի Պատժական օրինաց, դատապարտած է Մարդարեան Վահրամ էֆէնտին յիսուն ոսկւոյ տուգանաց և իւր տպարանի փակման։ Դատարանին այս որոշումը ՀՐԷՐՈՎ վերաքննութեան ենթարկելի է։

—

ԾՈՎԱԿԱԼ ԲԷՅԷՐՈՅ

Սեւ ծովու ռուսական նաւատորմին հրամանատար ծովակալ Բէյէրով երէկ առաւօտ մայրաքաղաքս հասաւ Սեվաստոպոլէն։ Ծովակալը թոքատապ ունենալով, բժիշկք պատուիրած են նմա ձմեռը տաք երկիր մը անցնել։ հետեւապէս քանի մը օր միայն պիտի մնայ ի Կ. Պոլիս եւ յառաջիկայ շաբթու Գահիրէ պիտի ուղեւորի ձմեռն անդ անցուցանելու համար։

—

ՈՍԿԵՂՋԻՒՐԻ ՇՈՒԳԵՆԱԻՔ

Ծովային նախարար Հասան փաշա նը-կատողութեան առնելով Ոսկեղջիւրի շրջեանաւուց վիճակն, որով ժողովուրդը մեծամեծ դժուարութիւնց կը հանդիպի, մանաւանդ ձմեռն, երեկոյեան շրջանաւներու երթեւեկութեան ատեն, հրամայած է նոյն շրջանաւուց վարչութեան՝ այնպիսի միջոցներ ձեռք առնուլ որովհետեւ կարելի ըլլայ ապահովել ժողովրդեան անդորրութիւնն ու գոհունակութիւնը, եւ յետ այսորիկ ուշադրութիւն ընել տեղի չտալու համար ժողովրդեան ամենափոքր դանգատանաց։

—

ԱՆԱՍՆՈՑ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ

Ներքին գործոց նախարարութիւնը շրջաբերական մ՚ուղղելով ծանոյց ամէն կողմ որ երբ անասնոց հիւանդութիւն երեւան եկէ, իւրաքանչիւր կառավարական պաշտօնեայ իրմէ վեր գտնուող պաշտօնեային եւ այսպէս կարգաւ մինչեւ կուսակալին իմաց տրուի քսան չորս ժամու մէջ։ Կուսակալն եւս, այդ դէպքն ամենէն մօտ գտնուող զինուորական կամ քաղաքային անասնաբոյժին իմաց տալէ և հարկ եղածն ի գործ դնելէ յետոյ, պարտաւոր պիտի ըլլայ իսնդիրը տեղեկագրել Ներքին գործոց նախարարութեան։

—

ՁԻՒՆԸ

Այս գիշեր երկրորդ անգամ ըլլալով ձիւնեց ի Կ. Պոլիս, բաւական առատօրէն։ Կէս գիշերուան մօտ, մայրաքաղաքս ծածկուած էր ձեան սպիտակ քօղով մը, զոր առաւօտեան մօտ տեղացող անձրեւք եւ կան հալեցուցին։ Ներկայ ձմրան մէջ առաջին անգամ ձիւնած էր չորեքշաբթի առաւօտ, բայց նոյն օրն եւս հալած էր իսկոյն, առանց իսկ գետինը ծածկելու։

Սպարապետութեան կողմէ այս աւուր թուրք լրագրաց մէջ կը հրատարակուի պաշտօնական ազդ մը կը ծանուցանէ թէ Սկիւտարի հրկիզելոց զինուորական մասին համար կազմեալ յանձնաժողովը յառաջիկայ հինգշաբթի օր պիտի փակէ իւր հաշիւները, հետեւաբար անոնք, որք ցարդ ստացած չեն իրենց նպաստները, պարտին մինչեւ նոյն օրը դիմել նպաստատուցեալ յանձնաժողովին։

—Մէկէմիա Բէկլիվանի դատը վաղը պիտի տեսնուի Եղեռնագատ ատենին առջեւ։

—Երէկ առաւօտ Գարաքէօյի կամուրջին տախտակամածը սառած ըլլալով անցնողներէ մեծ մասին ոտքը սահելով ինկան և ի միջի այլոց բեռնակիր մը, որ տակառ մը բեռցած էր, գետին ինկաւ և մէկ թեւը կոտրեցաւ։

—Շուէտական Ֆրէյա մարտանաւուն հրամանատարն երէկ Մեծ շուկան այցելեց ընկերակցութեամբ կոյս։ Թիւնապահի մը։

—Պոլսոյ նաւահանգիստէն Դանուբ ուղեւորող շոգենաւք այլ եւս սարքնք չեն առնուր, որովհետեւ յիշեալ գետը սառիլ սկսած է։

—Ամսոյս 12ին Հանեայի մէջ տեղի ունեցեր է Պետական Որդեգրոց ամենամեայ Ամարէաս էֆէնտի Քօրասիսի ամուսնութիւնն Կրէտէի աւտարիական ընդհ. հիւպատոսին աղջկան հետ։ Հարսանեաց գտնուեր են Շաքիր փաշա, Ճէվատ փաշա, և այլ երեւելիք։

—Օսմանեան առագաստանաւ մը որ փայտ բեռցած Պիրէոնէն Իզմիր կ՚երթար, փոթորկի բռնուելով ընկղմեր է։ Նաւապետն ու նաւասիք յաջողեր են ազատիլ լողալով։

—Պէրլինէն կը գրեն թէ քսան օրէ ի վեր ցուրտն սկսած է և մէկ քանի օր առաջ ալ Լիբանանու լերանց վրայ ձիւն տեղացեր է։ Վերջին օրերս ընկղմի մեծութեամբ կարկուտ տեղացեր և տուներու ապակիները խորտակեր է։

—Շքորոյի աւստրիական հիւպատոս կարգուած է Պ. Հէյքէլ և Բ. Դուռը վաւերացուցած է սորա պաշտօնը։

—Խասգիւղի մէջ կին մը մեռած է երկու ապտակով։ Այս կին Բէլլալ Սահակ անուն մարդու մը հետ առեւտուրի առթիւ կռուի կը բռնուի և Սահակ երկու ապտակ կը զարնէ կնոջ, որ չորս հինգ ժամ յետոյ կը մեռնի հակառակ բժշկաց անմիջական դարմաններուն։

—Փ. զօրաբանակի թնդանօթաձիգ զօրաց կիսարաձնի զօրավար Իսմէթ փաշա մինչեւ պաշտօնով Սէլանիկի զօրաբաժինը փոխադրուած է։

—Կայս. հրամանաւ զինուորական նուագածուաց խումբերուն մէջ, բաց ի Թամբուր հաշէր կոչուած մեծ թմբուկներէ, սուլիչի ձեւով փոքրիկ սրինգներ եւս պիտի գտնուին։

—Սուրիական Տրիպոլէն կը գրեն թէ տանին, որ անդ սովորական է, տակուին անհետացած չէ կախառակ օգտերու ցրտութեան եւ բազմաթիւ անձինք բռնուած են այդ հիւանդութենէն։

ՏՈՔԹՈՐ Կ. ԵԱՂՈՒԲԵԱՆ, Վիայեալ Բարձր. Բժշկական Համալսարանէն, կինդունի իրեն դիմող հիւանդներն իւր բնակարանին մէջ Բերա, Շէյլի փողոց, թիւ 21, ամէն օր դէս օրէն մինչեւ ժամ 3, բաց Երեսպաթոց։ Ուրբաթի օրերը ձրիաբար կը դարմանուին աղքատ հիւանդները։

Երկուշաբթի եւ չորեքշաբթի օրերը կը գտնուի ի Պոլիս Պահնէ Գարու, Ալիքեան դեղարան, ժամ 3 էն 5 (Ը. Ե.)։

ՏՊ. ԵԱՂՈՒԲԵԱՆ մասնաւորապէս կը դարմանէ սրտի հիւանդութիւններ, ինչպէս նաեւ մորթի եւ ծննդական գործարանաց վերաբերող ախտեր։ 917

Ա Զ Դ

Աբդուլլահ Եզէֆ-Ռուֆկոյ Ընդերքեան

կը ծանուցուի պատուարժան հասարակութեան թէ Հունգարիոյ երկաթուղեաց վարչութենէն առնուած տեղեկութեանց համաձայն՝ Արեւելեան Ճեպընթաց կառախումբն որ վաղը (չարաթ, 25 Նոյեմբ.) երեկոյեան ժամ 4 ին Կ. Պոլիս պիտի հասնէր, չպիտի գայ, Վիէննայի ու Բէլգրատի միջեւ առատ ձիւն դիզուած ըլլալուն պատճառաւ։

ՕՍՄ. ԿԱՅՍ. ՊԱՆՔԱ

Ազդ

Օսմ. կայս. Պանքային Պոլսոյ մասնաճիւղը Էսկի Զապթիյէ Ճատուէսի փողոցի Թոմսոն խանին մէջ գրասենեակ մը բացած է, հանդերձ վաճառատուներով, որք մինչեւ Պանքայի պիտի ծառայեն ապրանաց համար որոց փոխարէն Պանքան պատրաստ է փոխատուութիւններ ընել։ Յիշեալ գրասենեակը կ՚ընդունի նաեւ ընթացիկ հաշիւներ և կը կատարէ Պանքայի վերաբերեալ գործողութիւններ։ 911 5—8

ԼԷԹԱՅԻՑ ԱՍԱՐ

ՄԱՍՆ Ա. ԵՒ Բ.

Տէր Էֆէնտիներ

Արիկեան Մեծ. Միհրան էֆէնտիի սոյն գործն Ազգ. Ուսմն. Որորդէն ի վարուց հետէ յանձնարարեալ ըլլալով, ի մէջ այլոց Ազգ. Կեդր. վարժարանի և Միսգեալ ընկերութեան գլխաւոր մէջ ընդունուած է և Բերայեանէ յետոյ կը տրուի։ միայն է իւր տեսակին մէջ քանի որ կը պարունակէ տղայոց համար հասկնալի հետաքրքրական վէպեր, և իւրաքանչիւր գասի ներքեւ բառերուն հնչումն և իմաստը նշանակուած է։ Գինն է 60 փարա Ա. մասի բէ՚ոնա գրուին ալ հրատարակուած է և գինն է 60 փարա։ 920 1—2

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 24 Նոյեմբեր

Օսմանեան Քօնսօլիտէ

Մրեկ երեկոյ գոց. (Փաց.) Սերի	19	12
Գիշերայն գոցուելէն վերջը »	19	12
Բերայի մէջ »	—	—
Առաւօտուն բացուելեաց »	19	13
Պէս օրին »	19	13

ԻՍԹԱՆԲՈՒԼԻ ՏԱՓԻԼԻ

Երէկ երեկոյ	47	7
Այս առաւօտ	47	3
Պէս օր	47	3

ԷՆԹԱՑԵՔ ԱՐԺԵԹԹԵՐ

Գոհարաւութիւն	Ա. Սերի	35	30
»	Բ. »	22	15
»	Գ. »	19	13

ԲԱՓԵՆՏԱՅԻՆ

Սօսիէթէ գէներալ	Ադգ. Լ.	4	28
Գրէտիթ գէներալ	Օսմ. »	8	31
Վանք աք Գէնս	» »	7	17
Սօս. Շանտ է վիլէօր	» »	4	37
Թրամուէյ	» »	482	1/2
Բանքէի երկաթուղի	Ֆր.	75	25
Սպրկասիոն աք Բրիօրիթէ	»	—	—
Լասմենթուղի Լիվրիօմի		126	1/2

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՅ

Օսմանեան ոսկի	ՂԲԼ.	...	100
20 Ֆրանքոց	»	...	87 30
Անգլիական ոսկի	»	...	110 30
Իմպերիալ	»	...	90 20
Ֆրէսկոյ	»	...	51 10
Լուպլի թիզադրամ	»	...	8 51
» արծաթ	»	...	77 25
Մէջ. արծաթ (տարբ)	»	...	108 12
Վէնցոց	»	...	108 10
Հունգոց	»	...	108 10
Մէճիտիէ	»	...	100
Թասֆիրէ	»	...	7 10

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Բարիզ, 5 Դեկտեմբեր ժամ 4 վայր. — Երեկոյ

Ֆրանսական Ռանթ 3 %	87	72 1/2
» » 4 1/2 %	105	45
Օսմանեան քօնսօլիտէ Սերի Դ.	17	65
» Սմանեան երկաթուղի	76	50
» Լեմիի բանկեթուղիք	—	—
Ռանք Օթոման	585	
Գրէտիթ Լիոնէ	687	50
Իտալական Ռանթ 5 %	94	85
Հունական 5 %	չկայ	
Բրիօրիթէ Թիւրք	488	75
Եգիպտական միացեալ	466	25
Պանք տը Բարի	807	50
Օսմ. մաքս. արժեթուղթ	397	75
Պուէնոս Այրէսի Ընդ.	2300	
Լէք Լանտրայի վրայ	25	28

Լոնտոն, 5 Դեկտեմբեր ժամ — Վայր — Երեկոյ

Անգլ. քոնսոլիտէ	97	5/16
Օսմ. » Սերի Դ.	17	5/8
» » » գոց	—	—
» » » Ա	36	1/4
» » » Բ.	22	5/8
» » » Գ.	17	9/16
Փոխառութիւն 7	100	3/4
Պանք Օթոման	11	5/16
Եգիպտական միացեալ (իւնիֆիէ	93	13/16
» առանձ. բրիվիլէժիէ)	103	
Ցարյա Ռուսիէ	82	1/2
Տօսմանիայ փոխառ. բարիզ	102	1/16
Հունական 5 %	93	3/4
Մոնթէալ »	78	
Իռուսական 1873	—	
Փոխանակութիւն Բարիզի վրայ	25	28 1/2

ԲԱՐԻԶ ԲԹԻԹ ՊՈՒՐՍ

Բարիզ, 5 Դեկտ. ժ. — վ. — Երեկոյ

Ֆրանսական Ռանթ 3 %	87	70
Օսմանեան քոնսոլիտէ Դ.	17	92
Օսմանեան երկաթուղի	—	—
Եգիպտական միացեալ	466	56

Վիէննա, 5 Դեկտ. ժամ — Վայր. —

Օսմանեան երկաթուղի	39	50
» Լեմիի բանկեթուղիք	116	
Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	118	60

Պերլին, 5 Դեկտ. ժամ — Վայր. —

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	20	37
Բուպլ թիզադրամ	216	1/2
Օսմանեան երկաթուղի	84	

ՆՈՐ ԹԱՏՐՈՆ

ԲԵՐԱՑԻ

ԸՆԴ ՀՈՎԱՆԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ

ՎՍԵՍ. ՈՒՆԶԵԱՆ ՍԲԻԿ ԷՖԷՆՏԻԻ

Ի ՆՊԱՍՏ

Խասգիւղի Ս. ՆԵՐՍԻՍԵԱՆ երկսեռ վրժարանի

ԱՐՏԱՔՈՍ ԿԱՐԳԻ ՓԱՌԱՒՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

1889 Նոյեմբեր 26 Կիրակի երեկ

Պիտի սկսի ժամ Հինգ տին ըստ Տաճկաց և պիտի վերջանայ ժամ 11ին

Պ. Պ. Հ. ԱԴԱՄԵԱՆ

Առաջնորդութեամբ Տեարց

Պ. ՄԱՂԱԲԵԱՆ ԵՒ Օ. ԻՒԻՐԵՂԵԱՆ

Պիտի ներկայացնէ Հայերէն լեզուաւ

ՍԷՐ ԱՌԱՆՑ ՀԱՄԱՐՄԱՆ

Թարգմանեալ ի հին արաբ.

Պ. Պ. Հ. ԱԴԱՄԵԱՆ պիտի կատարէ

Էքսօլի նշանաւոր դերը

Անձինք	
ԷՐՔՕԼԻ	
ՇԷՐՕԼԱՄՕ	Գ. Մաղաքեան
ԱՆՃԷԼՕ	Դ. Թրեանց
ՆԷՐՕԹԻ	Ե. Ֆասուլեանեան
ԲԱՍԹՕՌԱՆԻ	Յ. Պէնլքեան
ՔԱՌԼՕ	Պ. Պալթազարեան
ԱՆՏՐԷԱ	Ս. Պարոնեան
ԱՄՊՐՕՃԻՕ	Գ. Ծերունեան
ԼԻՎԻՍ	Տիկ. Ռ. Նուարդ
ԱՆԻՆՃԷ	Օր. Հ. Աստղիկ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԴԵՐՈՒԱՆՈՒՀԻ

ԷՖԵՆԴԻ ՕՐԻԱՆՈՅՑ

Պիտի երգէ լուսազգն հեղինակութիւններէ երիս կտորներ՝ մասնակցութեամբ ընտիր երաժշտաց՝ որոց բարեհաճած է առաջնորդել Ազգ. մեծանուն երաժշտապետ

ՏԻԳՐԱՆ ԷՖԷՆՏԻ ԶՈՒՀԱՃԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

"ԱՐՁԱԳԱՆՔ,,ի

Ներկայ 1889 թուականի Դեկտեմբերի սկզբից, կառավարութեան թոյլտուութեամբ, «ԱՐՁԱԳԱՆՔ» շաբաթաթերթը կը սկսի հրատարակվել ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ։

Սորանից մօտ 6 ամիս առաջ, վճռելով Աչխատանքը պատկերազարդ դարձնել, խմբագրութիւնս ընթերցողներին բացատրեց իւր նպատակը։ Աչխատանքի համակրողները թէ՛ Թիֆլիզում և թէ՛ մանաւանդ գաւառներում յարգելով մեր նպատակը, շտապեցին յայտնել իրանց ջերմ ցանկութիւնը՝ օր առաջ Աչխատանքը պատկերազարդ տեսնել։

Բազմաթիւ բարեկամական նամակներ մեզ համոզեցին, որ հայ ընթերցողը ըզգում է պահանջ ունենալու լուրջ ուղղութեամբ հասարակական շահերին ծառայող մի թերթ, որ մի եւ նոյն ժամանակ զարգացնի իւր ընթերցողների գեղարուեստական հաճոյքը։

Աչքի առաջ ունենալով այդ պահանջը, սկսում ենք պատկերազարդ Աչխատանքի հրատարակութիւնը, հաւատալով հասարակութեան գնահատութեանը եւ յուսալով, որ մենք կուենենանք բաժանորդների այնքան թիւ, որ անհրաժեշտ է մեր մեծածախք թերթը արժանավայել կերպով հրատարակելու համար։

Պատկերազարդ Աչխատանքը կը հրատարակվի այժմեան ծրագրով, աւելի մեծ դիրքով եւ աւելի ճոխ բովանդակութեամբ։

Լոյս կը տեսնէ շաբաթը մի անգամ, կիրակի օրերը։

ՊԱՏԿԵՐՆԵՐ ԵՒ ՆԿԱՐՆԵՐ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ «ԱՐՁԱԳԱՆՔ»Ը կը պարունակէ հետեւեալ պատկերները եւ նկարները։

1) Պատկերներ հայրենի և օտար ժամանակակից ու պատմական գործիչների, հռչակուած պետական ծառայութեան, գիտութեան, գրականութեան եւ գեղարուեստի ասպարէզներում։

